ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 548-Ա

ԽԱՆՈՒՄ ԽԱՉԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Սեյսմշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 18-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, հողամասի սեփականատեր Խանում Խաչիկի Սահակյանի կողմից 2023 թվականի օգոստոսի 10-ի տրված լիազորագիրը (գրանցամատյանում թիվ 4954), Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 18-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023NGA8LM), հողամասի սեփականատեր Խանում Խաչիկի Սահակյանի լիազորված անձ՝ Գուրգեն Լյովայի Կարապետյանի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 3538 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող Խանում Խաչիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0033-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 163,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Ջիվան Հարությունյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան համար կազմում է 1969 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 322 325.3 (երեք հարյուր քսաներկու հազար երեք հարյուր քսանհինգ դրամ երեսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Գ. Լուսավորչի փողոց N 10 բնակելի տուն (ծածկագիր՝ 04069DVQQKYL):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 08
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 549-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի օգոստոսի 29-ին «Աստղիկ Մանուկյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հողամասի համասեփականատեր՝ Անուշ Գրիգորյանի 2023 թվականի օգոստոսի 30-ի թիվ 3669 դիմումը. ***որոշում եմ***՝

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի վարչական սահմաններում գտնվող Անուշ Գրիգորյանին և մյուսներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-069-0011-0015 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին 0.03987 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Մարշալ Բաղրամյան փողոց N 12 բնակելի տուն:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին 0.02327 հա մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Մարշալ Բաղրամյան փողոց N 12/1 բնակելի տուն:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 08
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 550-Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04052023-04-0042, N 04052023-04-0041, N 04052023-04-0044, N 04052023-04-0045, N 04052023-04-0046 և N 04052023-04-0040 վկայականները և հողամասի սեփականատեր Շանթ Նշան Խնկիկյանի 2023 թվականի օգոստոսի 28-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/6, Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/5, Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/4, Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/3, Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3/2 և Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3 հասցեներում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքին տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Կ. Դեմիրճյան թաղամաս 9-րդ փողոց N 3 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 08

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 551-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի N 454-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2023 թվականի օգոստոսի 14-ի N Կ-14082023-04-0095 որոշումը և քաղաքացի Մինաս Շմավոնի Մկրտումյանի 2023 թվականի օգոստոսի 15-ի N 3366 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասի ցածրարժեք հողատեսքը բարձրարժեքի փոխադրելու մասին» N 454-Ա որոշման՝

1) 1-ին կետում՝ «0.1» թիվը փոխարինել «0.1273» թվով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 11
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 552-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 384-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 2023 թվականի օգոստոսի 14-ի N Կ-14082023-04-0095 որոշումը և քաղաքացի Մինաս Շմավոնի Մկրտումյանի 2023 թվականի օգոստոսի 15-ի N 3366 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող քաղաքացիների սեփականություն հանդիսացող բարձրարժեք հողատեսքն ավելի ցածրարժեքի փոխադրելու մասին» N 384-Ա որոշման՝

1) 1-ին կետում՝ «0.1» թիվը փոխարինել «0.1273» թվով,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 11
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 553-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2- րդ մասի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուզաննա Մեջլումի Հովհաննիսյանը (ծնված՝ 07.06.1957թվականին, նույնականացման քարտ՝ 006695795, տրված՝ 17.08.2015 թվականին 001-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Նաիրի փողոց 15 տուն հասցեում, հանրային ծառայության համարանիշ՝ 5714570030) 15.08.2023 թվականին ներկայացել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, ներկայացրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների մասնակի վճարման անդորրագրեր (վճարման անդորրագրերի օրդերներ՝ թիվ 79929058, թիվ 79929056, թիվ 79929064, թիվ 79929066, թիվ 79929059, թիվ 79929052, թիվ 79929069, թիվ 79929060, թիվ 79929057) և հիմք ընդունելով Ռուզաննա Հովհաննիսյանի կողմից 15.08.2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին ներկայացված հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կազմելու վերաբերյալ թիվ 3370 դիմումը՝ որոշում եմ՝

1. Ռուզաննա Հովհաննիսյանի հետ կնքել հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 4 ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Ռուզաննա Հովհաննիսյանից գանձել ընդհանուր 111.485 (մեկ հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր ութսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 31.732 (երեսունմեկ հազար յոթ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես Ռուզաննա Հովհաննիսյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող, 04-094-018-016 կադաստրային ծածկագրով հողի՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված հարկային

պարտավորության գումար (21.294 (քսանմեկ հազար երկու հարյուր իննսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 10.438 (տասը հազար չորս հարյուր երեսունութ) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191048/ և 79.753 (յոթանասունինը հազար յոթ հարյուր հիսուներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես 04-094-0018-0016-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի՝ 2014-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (55.813 (հիսունհինգ հազար ութ հարյուր տասներեք) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես ապառք, իսկ 23.940 /քսաներեք հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամը՝ որպես տույժ) (վճարման հաշվի համար՝ 900325191501):

3. Սույն որոշմանը կից հավելվածով սահմանված ժամանակացույցի վճարման ժամկետները խախտելու դեպքում Ռուզաննա Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Ռուզաննա Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. սեպտեմբերի 11
գ.Փարաքար

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի
Փարաքար համայնքի ղեկավարի
2023 թվականի սեպտեմբերի 21-ի
թիվ 45 որոշման

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ /ԴՐԱՄ/	ՎՃԱՐՄԱՆ ՕՐԸ, ԱՄԻՍԸ, ՏԱՐԵԹԻՎԸ	ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳՐԻ ՀԱՄԱՐԸ
1	27.872	17.09.2023թ.	
2	27.872	17.10.2023թ.	
3	27.872	17.11.2023թ.	
4	27.872	17.12.2023թ.	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 554-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի օգոստոսի 17-ին «Նարեկ Մելիքսեթյան Մարլենի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հողամասի սեփականատեր՝ Արտյոմ Միքայելյանի 2023 թվականի օգոստոսի 30-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող Արտյոմ Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0142-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1)՝ 0.03106 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Ղ. Աղայան փողոց, 1-ին փակուղի N 9 հողամաս:

2. Նույն հողատարածքի կողմ 2-ին (առանձնացվող հատված 2)՝ 0.02917 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Ղ. Աղայան փողոց, 1-ին փակուղի N 9/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 555-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի օգոստոսի 20-ին «Էրիկ Թովմասյան Էդվարդի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, հողամասի սեփականատեր՝ Նորայր Տրդատի Սարգսյանի 2023 թվականի օգոստոսի 25-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի վարչական սահմաններում գտնվող Նորայր Տրդատի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0157-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին՝ (առանձնացվող հատված 1) 0.010462 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 222 առևտրի սրահ:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.010393 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 222/1 առևտրի սրահ:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 12
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 556-Ա

ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի օգոստոսի 18-ին «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից, «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2023 թվականի օգոստոսի 11-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 21-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր՝ 2023CHPCRC և 2023PS4CVL), հողամասի սեփականատեր Գառնիկ Հարությունի Հարությունյանի 2023 թվականի օգոստոսի 28-ի N 2519 և 2620 դիմումները. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող Գառնիկ Հարությունի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0095-0022 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 9,1 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, 24,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 9,1 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 6,4 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և ինքնակամ բացված մեկ դուռը, համաձայն համապատասխան

որակավորում ունեցող անձի՝ «Ավագ Ավագյան Գագիկի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան նկուղի և ծածկի համար կազմում է 2316 դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389,6 դրամ, յուրաքանչյուր մեկ ինքնակամ բացված դռան համար՝ 2316 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 102 135,60 (մեկ հարյուր երկու հազար մեկ հարյուր երեսունհինգ դրամ վաթսուն լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1)՝ 0.0605 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ռ. Գասպարյան փողոց 23 բնակելի տուն (ծածկագիր՝ 04094VFLJD4H), նույն հողամասի կողմ 2-ին (առանձնացվող հատված 2)՝ 0.0365 հեկտար մակերեսով հողամասին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ռ. Գասպարյան փողոց 23/1 բնակելի տուն (ծածկագիր՝ 04094CFTQT9V):

4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 13
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 557-Ա

ՆԵԼԻ ՇԱԲՈՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Ի. Գասպարյան փողոցի 24 հասցեում, Նելի Ռազմիկի Շաբոյանի /անձնագիր՝ AU 0301719, տրված՝ 07.06.2021թ., 010-ի կողմից, հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ Փարաքար համայնք Աբրահամյան փողոց տուն 8/ կողմից առանց համապատասխան թույլտվության մեկ հարկանի շինության ճակատային հատվածի բացվածքի իրականացման համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ.

Նելի Շաբոյանը, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, իրեն համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասում՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասերով սահմանված արարք կատարելու համար վարչական տույժ նշանակելու օրվանից հետո շարունակել է իրականացրել ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնակատար Լիլիթ Խուդավերդյանի 29.08.2023թ. թիվ 3638 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 29-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետերի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, վարչական հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի մասին իրազեկող 2023 թվականի սեպտեմբերի 4-ի N 2748 ծանուցումն ուղարկվել է փոստով և հրապարակվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական

ինտերնետային azdarar.am կայքում: Նելի Շաբոյանը լինելով պատշաճ ծանուցված՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ին դիմում է ներկայացրել /թիվ 3959/, ծածուցմամաբ նշված վարչական նիստը հնարավորության դեպքում 2023թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 15:00 հրավիրելու խնդրանքով: Ընդառաջելով դիմումատուի խնդրանքին՝ նիստը հրավիրնել է 2023թվականի սեպտեմբերի 13-ին ժամը 15:00-ին: Նիստին ներկայացել է Ն. Շաբոյանը և ներկայացրել պարտավորագի՝ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 17-ը իրավախախտման հետևանքները վերացնելու և տարածքը նախկին տեսքի բերելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 2023թվականի սեպտեմբերի 13-ի արձանագրությունը և Ն. Շաբոյանի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի պարտավորագիրը, որոշում եմ՝

1. Իրավախախտ Նելի Շաբոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 17-ը:
2. Նելի Շաբոյանի կողմից իրավախախտման հետևանքները սահմանված ժամկետում չվերացնելու և տարածքը նախկին տեսքի չբերելու դեպքում՝ վերսկսել վարչական վարույթը:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 14
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 558-Ա

«ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԺՈՐԱՅԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածով, 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, 275-283-րդ, 219.1-րդ և 305-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծված հանձնաժովի 2023 թվականի օգոստոսի 9-ի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի արձանագրությունները. որոշում եմ՝

1. Առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելու համար «ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԺՈՐԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նշանակել վարչական տուգանք՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով և առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպման և իրացման համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով՝ 100000 (մեկ հարյուր հազար) դրամի չափով:
2. «ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԺՈՐԱՅԻ» անհատ ձեռնարկատերը պարտավոր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15-օրյա ժամկետում նշանակված տուգանքի գումարը մուծել Փարաքարի համայնքապետարանի 900325191030 հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնել Փարաքար համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովին:
3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ԺՈՐԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 14

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 559-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Մերձավան բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագիրը և Փարաքար համայնքի բնակիչ Պայքար Պետրոսյանի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ղեկավարի

2023 թվականի սեպտեմբերի 14-ի

թիվ 559-Ա որոշման

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքների դրամական օգնություն ստացողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	հասցեն	Գումարը /ՀՀ դրամ/
1.	Մարտիրոսյան Մարիտա Միխայելի	Գ.Մերձավան	40 000
2.	Պետրոսյան Պայքար Նվերի	Գ.Փարաքար	40 000
	ընդամենը		80000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 560-Ա
ՄԱԴԻՆԱ ՎՅԱՉԵՍԼԱՎԻ ԵԳԻԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ սեփականության իրավունքով Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Պտղունք գյուղի 04-082-0306-0055 կադաստրային ծածկագրով հասցեում առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինարարություն՝ գյուղատնտեսական տնակների և ծածկի կառուցում և տեղադրում իրականացնելու համար տուգանք նշանակելու մասին հարցը, պարզեց որ.

Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանը խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, ինչի կապակցությամբ Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պատոնակատար Լ. Խուդավերդյանի 2023թվականի օգոստոսի 30-ի թիվ 25 արձանագրության և թիվ 3689 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի օգոստոսի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա է եղել նաև իրավախախտ Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանի լիազորված անձ Վյաչեսլավ Սեդրակի Եգիազարյանը անձնագիր՝ AU 0380824, տրված՝ 05.08.2021թ. 099-ի կողմից ,/հիմք լիազորագիր 5264՝ տրված 2022թվականի հուլիսի 27-ին//հիմք լիազորագիր 5264՝ տրված 2022թվականի հուլիսի 27-ին/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՀՀ

Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Պտղունք գյուղի 04-082-0306-0055 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավեր գործառնական նշանակության հողամասում գյուղատնտեսական տնակներ և ծածկ կառուցելու մասին 2023թվականի օգոստոսի 30-ի թիվ 25 արձանագրությունը, վարչական հանձնաժողովի 2023թվականի սեպտեմբերի 11-ի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, բնապահպանության և գյուղատնտեսության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակարարի 2023թվականի օգոստոսի 30-ի թիվ 3689 զեկուցագրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանի կողմից Փարաքար համայնքի Պտղունք գյուղի 04-082-0306-0055 կադաստրային ծածկագրով հասցեում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարվել են շինարարական աշխատանքներ՝ գյուղատնտեսական նշանակության տնակների և ծածկի կառուցում և տեղադրում, ուստի քննարկվող կառույցը հանդիսանում է ինքնակամ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի օգոստոսի 30-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 սեպտեմբերի 11-ին հրավիրվել է վարչական նիստ, որին մասնակցելու նպատակով Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանը պատշաճ ծանուցվել է՝ ծանուցումը ստորագրությամբ Փոստի միջոցով հանձնելու միջոցով /հիմք՝ 2023 թվականի սեպտեմբերի 7-ի N 2802 ծանուցումը/: Նիստին ներկա իրավախախտ Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանի լիազորված անձ՝ Վյաչեսլավ Սեդրակի Եգիազարյանը պարտավորվել է սեղմ ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային

օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան, շինարարության թույլտվության հիման վրա:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն, ինչպես նոր կառուցվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի 04-082-0306-0055 կադաստրային ծածկագրով հասցեում առանց համապատասխան շինարարական թույլտվության կատարել է շինարարական աշխատանքներ՝ տնակների և ծածկի կառուցում և տեղադրում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ «Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա,... օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և 23-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 2023թվականի սեպտեմբերի 11-ի արձանագրությունը և Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի կողմից 2023թվականի օգոստոսի 30-ի թիվ 3689 զեկուցագիրը. որոշում եմ՝

1. Իրավախախտ Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանի նկատմամբ նշանակել տուգանք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի Պտղունք գյուղի 04-082-0306-0055 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, կորիզավեր գործառնական նշանակության հողամասում գյուղատնտեսական տնակներ և ծածկ կառուցելու և տեղադրելու համար 100.000 / հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ խախտողի կողմից տուգանքը պետք է

վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325191030 հաշվեհամարին՝ ստացող Փարաքար համայնք:

2. Առաջարկել իրավախախտող Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրյա ժամկետում վերացնել իրավախախտման հետևանքները:
3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Իրավախախտ Մադինա Վյաչեսլավի Եգիզարյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ.սեպտեմբերի 14
գ.Փարաքար